Գևորգ Իսրայելյան
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ g_i_1979@mail.ru
DOI: 10.53614/18294952-2021.2-35

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԱՆՏԻՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում մեր կողմից ի հայտ բերվեցին կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված արտակարգ դրության և կարանտինի պայմաններում սահմանված սահմանափակումների խախտումների դեմ պայքարում վարչական հարկադրանքի միջոցների իրագործումը բարդացնող, իրագործմանը խոչընդոտող կամ սխալ կիրառման հիմք հանդիսացող իրավական բնույթի մի շարք գործոններ: Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում վերը նշված գործոնների բնութագրին և դրանց չեզոքացման՝ մեր կողմից առաջարկվող միջոցներին: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է կորոնավիրուսային հիվանդության շարունակական տարածման պայմաններում համապատասխան վարչարարության իրականացմանը խոչընդոտող իրավական բնույթի գործոնների առկայությամբ և դրանց չեզոքացման անհրաժեշտությամբ: Հետազոտության նորույթը պայմանավորված է հիմնախնդրին

վերաբերող այլ ուսումնասիրությունների բացակայությամբ:

Հիմնաբառեր. վարչական հարկադրանք, վարչական իրավախախտում, կորոնավիրուսային հիվանդություն, կարանտին, իրավական հիմքեր:

Ներածություն

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ վարչական հարկադրանքի կիրառումը նախատեսող օրենսդրության մեջ առկա են որոշակի բացեր կամ կարգավորման անորոշություններ, որոնք հնարավորություն չեն տվել ձևավորել միասնական իրավակիրառ պրակտիկա, իսկ երբեմն նպաստել են իրավական նորմերի սխալ մեկնաբանման, ինչի արդյունքում վարչական հարկադրանքի համապատասխան միջոցներ չեն կիրառվել կամ սխալ են իրագործվել:

Մեթոդը

Խնդրո առարկան ուսումնասիրվել է իրավահամեմատական, վիճակագրական, փաստաթղթերի ուսումնասիրության, հարցման, փորձագիտական գնահատման, մեդիայի նյութերի կոնտենտ վերլուծության մեթոդների օգտագործմամբ:

Կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված արտակարգ դրության և կարանտինի պայմաններում սահմանված սահմանափակումների խախտումների համար վարչական հարկադրանքի միջոցների կիրառումը սահմանող օրենսդրության բացերը

Հետազոտության ընթացքում պարզվեց, որ խնդիրներ են առաջացել վարչական հարկադրանքի որոշ միջոցների կիրառման ընթացակարգերը պահպանելիս: Մասնավորապես, խնդրահարույց է վարչական ձերբակալման և իրավախախտի բերման ինստիտուտները կարգավորող նորմերի ճիշտ ընկալումը, մեկնաբանումը, արդյունքում՝ իրավաչափ կիրառումը:

Վարչական ձերբակալմանն առնչվող հարաբերությունները կարգավորված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ ՎԻՎՕ) 260-262-րդ հոդվածներով: Օրենքի բացն այն է, որ այն չի սահմանում վարչական ձերբակալման հասկացությունը. ընդամենը նշված են ձերբակալման հիմքերը, կարգը, ձերբակալելու իրավասու մարմինները, արձանագրման կարգը և ժամկետը: Խնդրահարույց է զանցանք կատարած անձի վարչական ձերբակալման ժամկետի հաշվարկման կանոնը. օրենքը սահմանում է, որ վարչական ձերբակալումը կարող է տևել ոչ ավելի, քան 3 ժամ, ընդ որում ժամկետը հաշվվում է արձանագրություն կազմելու համար խախտողին բերելու պահից: Անորոշ է՝ ժամկետը հաշվվում է բերումը սկսելու պահից, թե՝ անձին ոստիկանութ-

յան բաժին բերելու պահից:

Երբեմն իրավախախտին բերելու ժամանակ նրան հայտարարվել է, թե ձերբակալված է: Ուստի անհրաժեշտություն է առաջացել օրենսդրորեն է տարբերակել վարչական ձերբակալումն ու բերումը:

Բերմանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքի 258-րդ հոդվածով: ՎԻՎՕ-ն չի սահմանում բերման հասկացությունը: Ընդամենը նշվում է հիմքը. եթե տեղում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելը պարտադիր է, սակայն հնարավոր չէ՝ ոստիկանության աշխատողը խախտողին կարող է բերել ոստիկանության ստորաբաժանում: Բերումը պետք է կատարվի հնարավորի չափ կարճ ժամկետում:

Հաջորդ խնդիրն այն է, որ վարչարարություն իրականացնող անձինք հարկադրանքի միջոցները կիրառելիս երբեմն շփոթում են դրանք, հաճախ նույնացնում «բերում» և «բերման ենթարկել» հասկացությունները: Բերման ենթարկելուն անդրադարձ կա միայն վարչական պատասխանատվության ենթարկվողի կարգավիճակի կարգավորման մեջ: Ուստի անհրաժեշտ է օրենսդրորեն տարբերակել նշված հասկացությունները:

Իրավակիրառ գործունեության մեջ խնդիր է առաջացել նաև իրավական նորմի սխալ մեկնաբանման հիման վրա դրա կիրառման հարցերում: Այսպես, դիմակ կրելու պարտականության պարագայում քաղաքացին առանց օրինական հիմքերի պարբերաբար խախտումներ է թույլ տվել, սակայն վարույթ իրականացնող մարմնի կողմից պատասխանատվության է ենթարկվել միայն առաջին խախտումը հայտնաբերելիս:

Կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված արտակարգ դրության և կարանտինի պայմաններում սահմանված սահմանափակումների խախտումների համար վարչական հարկադրանքի միջոցների կիրառումը սահմանող օրենսդրության կատարելագործման առաջարկներ

Վարչական ձերբակալման և իրավախախտին բերելու ինստիտուտները կարգավորող նորմերի ճիշտ ընկալումը, մեկնաբանումը, արդյունքում՝ իրավաչափ կիրառումն ապահովելու նպատակով առաջարկում ենք.

1. ՎԻՎՕ-ում ամրագրել վարչական ձերբակալման հետևյալ սահմանումը. «Վարչական ձերբակալումն անձի ազատության կարճաժամկետ սահմանափակումն է»: Նման բնորոշումը հնարավորություն է տալիս ընկալել, որ վարչական ձերբակալումը կարող է դրսևորվել անձին ոստիկանության կամ համապատասխան այլ շինությունում պահելով: Մասնավորապես, ոստիկանության կողմից վարչական կարգով ձերբակալված անձինք պետք է պահվեն ոստիկանության տարածքային մարմնի հերթապահ մասում՝ վարչական կարգով ձերբակալվածների համար առանձնացված վայրերում (խցերում):

2. ՎԻՎՕ-ում ամրագրել իրավախախտի բերման հետևյալ սահմանումը. «Բերումը ֆիզիկական անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի կարճատև

սահմանափակումն է:»: Նման բնորոշումը հնարավորություն է տալիս ընկալել, որ իրականում բերումը և վարչական ձերբակալումը վարչական հարկադրանքի տարբեր միջոցներ են: Այդ մասին են վկայում նաև հարկադրանքի նշված միջոցներով սահմանափակվող իրավունքները: Ակնհայտ է՝ եթե վարչական ձերբակալման դեպքում սահմանափակվում է անձի ազատությունը, ապա իրավախախտին բերելու դեպքում՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը:

3. ՎԻՎՕ-ում ամրագրել վարչական ձերբակալման ժամկետի հաշվարկման հետևյալ կանոնը. «Վարչական ձերբակալման ժամկետը հաշվվում է արձանագրություն կազմելու համար խախտողին ոստիկանության բաժին կամ այլ ծառայողական շինություն բերելու պահից»: Նման իրավակարգավորման պարագայում իրավախախտին բերելու ժամկետը և վարչական ձերբակալման ժամկետը կհաշվվեն առանձին-առանձին, քանի որ, ինչպես վերը նշվեց, դրանք տարբեր գործողություններ են:

4. ՎԻՎՕ-ում ամրագրել բերման ենթարկելու հասկացությունը. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում, օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, վարչական պատասխանատվության ենթակվողը, ինչպես նաև վկան կարող են բերման ենթարկվել վարչական մարմնի կամ վարչական դատարանի որոշմամբ:»: Նման կարգավորման արդյունքում ակնհայտ է դառնում, որ բերման ենթարկելն իրականացվում իրավասու մարմնի որոշմամբ, որպես վարույթի ապահովման միջոց, իսկ բերումը կատարվում է, եթե տեղում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելը պարտադիր է, սակայն հնարավոր չէ՝ առանց որոշում կայացնելու: Բերման վերաբերյալ կազմվում է համապատասխան արձանագրություն, բերման ենթարկելու դեպքում՝ ոչ:

Ինչ վերաբերում է անգործությամբ դրսևորվող միևնույն վարչական իրավախախտումը պարբերաբար կատարելու դեպքերին, ապա վարչական հարկադրանքի միջոցը՝ վարչական տույժը պետք է կիրառվի յուրաքանչյուր խախտման համար, քանի որ քննարկվող հարցի վերաբերյալ առկա է օրենսդրական իմպերատիվ կարգավորում. մասնավորապես ՎԻՎՕ 40-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

Եզրակացություն

Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում բացահայտված կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված արտակարգ դրության և կարանտինի պայմաններում սահմանված սահմանափակումների խախտումների դեմ պայքարում վարչական հարկադրանքի իրագործումը բարդացնող, իրագործմանը խոչընդոտող կամ սխալ մեկնաբանման, արդյունքում՝ սխալ կիրառման հիմք հանդիսացող իրավական բնույթի գործոնների չեզոքացման ուղղությամբ մեր կողմից ներկայացված առաջարկությունները, կենսագործման պարագայում, կնպաստեն վարչական իրա-

վախախտումների վերաբերյալ օրենսդրության կատարելագործմանը և դյուրին կիրառմանն ինչպես հոդվածում քննարկվող բնագավառի, այնպես էլ այլ վարչական իրավախախտումների դեմ պայքարում:

Օգտագործված գրականություն

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, ընդունված 1985թ. դեկտեմբերի 6-ին (առ 30.07.2021թ. փոփոխություններով և լրացումներով): Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: ՀՍՍՀԳՍ 1985/23
https://www.arlis.am/documentview.aspx?docid=73129 (մուտք՝ 20.09.2021)

Գևորգ Իսրայելյան, Թագավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում սահմանված սահմանափակումների պահպանման ուղղությամբ ՀՀ ոստիկանության վարչարարության արդյունավետության բարձրացման որոշ հարցեր // Բանբեր արդարադատության ակադեմիայի, № 1 (5), 2021, էջեր 65-74:
https://www.justiceacademy.am/assets/attachments/gevorg_israyelian_2021.pdf (մուտք՝ 20.09.2021)

References

Varchakan iravakhakhtumneri veraberyal Hayastani Hanrapetut'yan orensgirk [Republic of Armenia Code on Administrative Offences], yndunvats 1985t. dektemberi 6-in. (ar 30.07.2021t. popokhutyunnerov yev lratsumnerov). Hayastani iravakan teghekatvakan hamakarg. HSSHGST 1985/23 (accessed 20.09.2021)

*Gevorg Israyelyan, Tagavarakov paymanavorvac artakarg drutyan paymannerum sahmanvac sahmanapakumneri ughghutyamb HH vostikanutyan varchararutyan ardyunavetutyan bardzracman vorosh harcer //*Banber ardaradatutyan akademiay, № 1 (5), 2021, էջեր 65-74:
https://www.justiceacademy.am/assets/attachments/gevorg_israyelian_2021.pdf (մուտք՝ 20.09.2021)

Геворг Исраелян
Преподаватель Международного университета Евразия,
кандидат юридических наук, доцент
Эл. адрес: g_i_1979@mail.ru

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРАВОВЫХ ОСНОВ ПРИМЕНЕНИЯ АДМИНИСТРАТИВНОГО ПРИНУЖДЕНИЯ ЗА НАРУШЕНИЯ ОГРАНИЧЕНИЙ, УСТАНОВЛЕННЫХ В УСЛОВИЯХ ЧРЕЗВЫЧАЙНОГО ПОЛОЖЕНИЯ И КАРАНТИНА, СВЯЗАННОГО С КОРОНАВИРУСНОЙ ИНФЕКЦИЕЙ

В результате исследования правоприменительной практики, автором вы-

явлены факторы правового характера, которые усложняют или препятствуют процессу реализации мер административного принуждения за нарушения ограничений, установленных в условиях чрезвычайного положения и карантина, связанного с коронавирусной инфекцией. В статье описаны вышеупомянутые факторы и автором предложены средства их нейтрализации.

Ключевые слова: административное принуждение, административное правонарушение, коронавирусная болезнь, карантин, правовые основы.

Gevorg Israyelyan
Lecturer of the Law Department at Eurasia International University,
Ph.D. in Law, Associate Professor,
Email: g_i_1979@mail.ru

SOME ISSUES OF IMPROVING THE LEGAL BASIS FOR ADMINISTRATIVE COERCION FOR VIOLATIONS OF THE QUARANTINE RESTRICTIVE CONDITIONS DUE TO THE CORONAVIRUS

As a result of the study of law enforcement practice, we have identified a number of legal factors that complicate or impede the implementation of administrative coercion for violations of quarantine restrictions due to the coronavirus disease. This article discusses the characteristics of the above-mentioned factors and their neutralization with available tools. The urgency of the research is conditioned by the existence of legal factors hindering the implementation of COVID-19 with its continuous spread and the need for neutralization. The new of the following research has been raised due to the lack of studies in this field.

Key words: administrative coercion, administrative offense, coronavirus disease, quarantine, legal basis.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2021թ. սեպտեմբերի 30-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2021թ. հոկտեմբերի 21-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2021թ. հոկտեմբերի 21-ին: